

Ընդունված է ՀԱԱՀ

գիտխորհրդի 30.08.2013թ որոշմամբ

(արձանագրություն N 2)

ՀԱԱՀ ռեկտոր՝ Ա. Թարվերդյան

< > < > 2013թ.

**Հայաստանի ազգային ագրարային համալսարանի (ՀԱԱՀ) ուսանողներին  
ուսանողական նպաստ, կրթաթոշակ տալու, մրցույթի կազմակերպման  
(շրջափոխման) և անցկացման**

**Կ Ա Ն Ո Ն Ա Կ Ա Ր Գ**

**1. Ընդհանուր դրույթներ**

1. Սույն կանոնակարգը մշակված է հիմք ընդունելով «Կրթության մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի 6-րդ մասի, «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի 6-րդ հոդվածի 4-րդ մասի, 17-րդ հոդվածի 3-րդ մասի 7-րդ ենթակետի 26-րդ հոդվածի 6-րդ մասի դրույթները, ՀՀ կառավարության 2006թ. հուլիսի 27-ի «ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսանողական նպաստ և պետական կրթաթոշակ տալու կարգը հաստատելու մասին №1183-Ն որոշման (ՀՀ կառավարության 2012թ հոկտեմբերի 10-ի №1233-Ն որոշմամբ կատարած փոփոխություններով և լրացումներով), ինչպես նաև ՀՀ կրթության և գիտության նախարարության «Պետական բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսումնական տարվա առաջադիմության արդյունքներով ուսանողական նպաստի տրման վերաբերյալ» 2006թ. հունիսի 15-ի № 21-03-06/337 հրահանգչական նամակը (լրացումով) և կարգավորում է ուսանողների տարեկան առաջադիմության հաշվարկի մեթոդիկայի և ուսանողական նպաստ տալու մրցույթի պայմանների մշակումը, մրցույթի կազմակերպման ու իրականացման ընթացակարգը:

2. Սույն կանոնակարգի 1-ին կետում նշված և այլ իրավական ակտերի համաձայն ուսման վճարի փոխհատուցում (լրիվ կամ մասնակի) նպաստի ձևով տրվում է մրցույթի արդյունքներով համալսարան ընդունված, ուսումնական տարվա արդյունքներով բարձր առաջադիմություն ունեցող, սոցիալապես անապահով, ինչպես նաև սահմանամերձ և բարձր լեռնային բնակավայրերի ուսանողներին՝ անկախ ուսումնառության համակարգից (անվճար և վճարովի), ՀՀ կառավարության հաստատած տեղերի քանակին և կարգին համապատասխան:

3. Պետությունը ուսանողական նպաստի ձևով ուսման վճարի լրիվ փոխհատուցում տրամադրում է՝

ա) մեկ ուսումնական տարվա քննությունների և ստուգարքների արդյունքներով առավել բարձր գնահատականներ ունեցող ուսանողներին՝ մրցութային կարգով,

բ) օրենքով նախատեսված հետևյալ սոցիալական խմբերին՝

- առանց ծնողական խնամքի մնացած ուսանողներին և նրանց թվին պատկանող անձանց,

- 1-ին և 2-րդ խմբերի հաշմանդամներին և հաշմանդամ երեխայի կարգավիճակ ունեցող ուսանողներին,

- զոհված զինծառայողի երեխա-ուսանողներին, պարտադիր ժամկետային զինվորական ծառայության ընթացքում հաշմանդամ դարձած ուսանողներին,

զ) պետության համար առաջնահերթություն և կարևորություն ներկայացնող մասնագիտություններով նպատակային ուսուցմամբ ընդունված ուսանողներին,

դ) ՀՀ կառավարության կողմից պարտադիր ժամկետային զինվորական ծառայությունից զորացրված դիմորդներին հատկացված անվճար տեղերի հաշվին՝ 1-ին կուրս անվճար համակարգ ընդունված ուսանողներին, որպես նպատակային ընդունելու-թյամբ ընդունվածներ (հիմք՝ ՀՀ ԿԳ նախարարության №21-03-06/513 առ. 12.09.2006 գրությունը)։

ե) անվճար համակարգում սովորող ուսանողները համալսարանից հարգելի պատճառներով (ակադեմիական արձակուրդ՝ առողջական վիճակ կամ զինծառայություն) համալսարանից ազատվելուց հետո վերականգնվելիս պահպանում են նախկինում ունեցած նպաստ ստանալու իրավունքը (հիմք՝ ՀՀ կառավարության 27.07.2006թ №1183-ն որոշման 9-րդ կետը)։

4. Պետությունն ուսանողական նպաստի ձևով ուսման վճարի մասնակի փոխհատուցում տրամդրում է յուրաքանչյուր տարի Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության կողմից սահմանված ուսանողի միջին որակական գնահատականի նվազագույն շեմը հաղթահարած և ընտանիքների անապահովության գնահատման համակարգում հաշվառված՝ Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից յուրաքանչյուր տարի սահմանվող անապահովության սահմանային միավորից բարձր միավորներ ունեցող հետևյալ խմբերին՝

ա) մինչև 5 միավոր բարձր անապահովության միավոր ունեցող ընտանիքի անդամ հանդիսացող ուսանողներին՝ ուսման վճարի 50 տոկոսի չափով,

բ) 5-10 միավորով բարձր անապահովության միավոր ունեցող ընտանիքի անդամ հանդիսացող ուսանողներին՝ ուսման վճարի 60 տոկոսի չափով,

գ) 10-15 միավորով բարձր անապահովության միավոր ունեցող ընտանիքի անդամ հանդիսացող ուսանողներին՝ ուսման վճարի 70 տոկոսի չափով,

դ) 15-20 միավորով բարձր անապահովության միավոր ունեցող ընտանիքի անդամ հանդիսացող ուսանողներին՝ ուսման վճարի 80 տոկոսի չափով,

ե) 20-ից բարձր անապահովության միավոր ունեցող ընտանիքի անդամ հանդիսացող ուսանողներին՝ ուսման վճարի 100 տոկոսի չափով։

5. Ուսանողի միջին որակական գնահատականի նվազագույն շեմը յուրաքանչյուր տարի սահմանում է Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարությունը։

6. Պետության կողմից ուսանողական նպաստի ձևով ուսման վճարի մասնակի փոխհատուցում ստանալու համար ուսանողն իր ընտանիքի անապահովության միավորի վերաբերյալ սոցիալական ծառայություններ տրամադրող տարածքային մարմնի տրամադրած տեղեկանքը յուրաքանչյուր տարի բուհ է ներկայացնում մինչև տվյալ տարվա սեպտեմբերի 10-ը:

7. Առանց ծնողական խնամքի մնացած և նրանց թվին պատկանող ուսանողներին, զոհված զինծառայողի երեխա-ուսանողներին ուսանողական նպաստներ տրամադրվում են 1-ին կուրսից մինչև կրթական ծրագրի ավարտը: 1-ին և 2-րդ խմբերի հաշմանդամներին և հաշմանդամ երեխայի կարգավիճակ ունեցող ուսանողներին, պարտադիր ժամկետային զինվորական ծառայության ընթացքում հաշմանդամ դարձած ուսանողներին, փաստաթղթերի առկայության դեպքում, ուսանողական նպաստներ տրվում են 1-ին կուրսի սկզբում և վերանայվում յուրաքանչյուր ուսումնական տարվա վերջում:

Նպաստառու ուսանողի սոցիալական վիճակի փոփոխության դեպքում համալսարանի կողմից տրամադրվող ուսանողական նպաստը կարող է փոխել:

8. ՀՀ պետական բուհերի ընդունելության կանոններով սահմանված կարգով առաջին կուրս ընդունված ուսանողներին ուսանողական նպաստը տրվում է ըստ ընդունելության մրցույթի արդյունքների, առավել բարձր մրցութային միավոր հավաքած ուսանողներին՝ ՀՀ կառավարության հատկացված տեղերի հաշվին:

Հաջորդ կուրսերում ուսանողական նպաստի ձևով ուսման վճարի լրիվ փոխհատուցում տրվում է մեկ ուսանողական տարվա քննությունների և ստուգարքների արդյունքներով առավել բարձր առաջադիմություն ունեցողներին՝ մրցութային հիմունքներով:

Նպաստների տրամադրման (շրջափոխման) գործընթացին մասնակցում են միայն սեսիոն քննություններին մասնակցած և դրական գնահատականներ ստացած ուսանողները, բացառությամբ այն ուսանողների, որոնք սեսիոն քննություններին չեն մասնակցել առողջության պատճառով՝ հիմնավորված համապատասխան փաստաթղթերով:

9. Նպաստներ տալու (շրջափոխման) գործընթացին չեն մասնակցում սիյուռքահայ և արտասահմանյան երկրներից համալսարան ընդունված (կամ փոխադրված) ուսանողները, եթե նրանք ընդունվել են (փոխադրվել են) վճարովի համակարգ: Սույն կետը չի տարածվում այլ երկրներից ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից սահմանված կենտրոնացված ընդունելության կարգով համալսարան ընդունված ուսանողների վրա:

10. Համալսարանի մի ֆակուլտետից մի այլ ֆակուլտետ կամ մի մասնագիտությունից մի այլ մասնագիտություն, ինչպես նաև այլ բուհերից համալսարան տեղափոխվող ուսանողները (բացառությամբ սույն կանոնակարգի 3-րդ կետի բ), գ), դ), ե) ենթակետերում նշված տարակարգերի ուսանողների), փոխադրման ուսումնական տարում չեն մասնակցում նպաստների տրման շրջափոխման գործընթացին, անկախ նրանց նախորդ ուս. տարվա առաջադիմության արդյունքներից: Հաջորդ տարիներին մասնակցում են նպաստ տալու մրցույթին, համաձայն սույն կանոնակարգի:

11. Համալսարանի «Ազրոբիզնես և շուկայաբանություն» ֆակուլտետի «Ազրոբիզնես և շուկայաբանություն» մասնագիտությամբ սովորող ուսանողները, ովքեր տեղափոխվում են «Ազրոբիզնեսի դեպարտամենտ», փոխադրման առաջին տարում՝ (միայն 3-րդ կուրսում) ուսանողական նպաստ և կրթաթոշակ տալու մրցույթին մասնակցում են նախորդ ուսումնական տարվա առաջադիմության արդյունքներով, տվյալ մասնագիտությանը ամրագրված անվճար տեղերի շրջանակներում:

Ազրոբիզնեսի և շուկայաբանության ֆակուլտետի «Ազրոբիզնես և շուկայաբանություն» մասնագիտությունում 4-րդ և հաջորդ կուրսերում շրջափոխումն իրականացվում է այդ մասնագիտությանը 1-ին կուրսում հատկացված անվճար տեղերի վրա:

12. Համալսարանի տնտեսագիտական և «Ազրոբիզնես և շուկայաբանություն» ֆակուլտետների այլ մասնագիտություններից, ինչպես նաև այլ ֆակուլտետների տարբեր մասնագիտություններից Ազրոբիզնեսի դեպարտամենտի «Ազրոբիզնես և սննդի արդյունաբերության կառավարում» մասնագիտացում տեղափոխված (փոխադրված) ուսանողները սովորում են վճարովի համակարգում:

13. Ազրոբիզնեսի դեպարտամենտ տեղափոխված (փոխադրված) բոլոր ուսանողները հաջորդ տարիներին (4-րդ կուրսում) չեն մասնակցում նպաստների և կրթաթոշակների տրման (շրջափոխման) մրցույթին:

## **2. Ուսանողների առաջադիմության հաշվարկման, մրցույթի անցկացման և առաջադիմության արդյունքներով կարգավիճակի շրջափոխման ընթացակարգը**

14. Ուսանողական նպաստների քանակը (անվճար ուսուցման տեղերի քանակը) ըստ մասնագիտությունների և կուրսերի սահմանվում է ՀՀ կառավարության կողմից պետական բյուջեով ամրագրված նպաստների քանակով:

15. Ուսանողների առաջադիմությունը գնահատվում է քսան (20) կամ (100) հարյուր միավորների համակարգով (ըստ ռեկտորատի որոշման), իսկ տարեկան միջին որակական գնահատականը որոշվում է երկու կիսամյակների քննությունների հաշվառմամբ՝ 0,01-ի ճշտությամբ: Եթե տվյալ կիսամյակում առարկան ավարտվում է դիֆերենցիալ ստուգարքով, ապա միջին միավորի որոշման ժամանակ հաշվի չի առնվում դիֆերենցիալ ստուգարքի գնահատականը, այն հաշվի է առնվում հավասար միավորների դեպքում (տես 16-րդ կետը):

16. Ուսանողների առաջադիմության միջին որակական գնահատականը որոշվում է առարկայական պարտքերի վերջնական մարումից հետո, բայց ոչ ուշ, քան մինչև սեպտեմբերի 20-ը: Շրջափոխման ժամանակ առաջադիմության արդյունքների հավասար միջին որակական միավորների դեպքում առաջնությունը տվում է.

✓ նախորդ տարում անվճար համակարգում սովորող ուսանողներին

✓ տվյալ կիսամյակում դիֆերենցիալ ստուգարքից առավել բարձր միավոր ստացած ուսանողներին:

✓ քննաշրջանի ընթացքում բոլոր քննությունները դրական հանձնած ուսանողներին (բացառությամբ այն ուսանողների, ովքեր քննաշրջանում քննության չեն ներկայացել հարգելի պատճառով, սահմանված կարգով և սահմանված ժամկետին ներկայացրած փաստաթղթերի առկայության դեպքում) .

✓ անհարգելի բացակայություններ չունեցող ուսանողներին.

✓ սոցիալապես անապահով վիճակում գտնվող ուսանողներին (համապատասխան փաստաթղթերի առկայության դեպքում)

✓ միջբուհական, հանրապետական կամ միջազգային առարկայական օլիմպիադաների մրցանակակիրներին.

✓ մասնագիտական, ընդհանուր մասնագիտական կամ տվյալ մասնագիտության համար առավել կարևոր առարկաներից առավել բարձր միավոր ստացած ուսանողներին.

✓ ուսանողական, գիտական ընկերություններում ուսումնահետազոտական աշխատանքներ կատարած և հրատարակած աշխատանքներ ունեցող ուսանողներին.

✓ պատշաճ վարքագիծ ունեցող ուսանողներին.

✓ զինվորական ծառայությունը ավարտած ուսանողներին.

✓ համալսարանի կամ ֆակուլտետի ուսանողական խորհրդի ակտիվ անդամներին

Դրանց հավասարության դեպքում ուսանողական նպաստը հավասարապես բաշխվում է տվյալ տեղին հավակնող (մրցակից կողմերի) ուսանողների միջև, իսկ վարձավճարի մյուս մասը` մուծում են հավասարապես:

17.Առաջադիմության արդյունքների հիման վրա ուսանողական նպաստների հաշվարկման մրցույթը կազմակերպում է համալսարանի ուսանողների նպաստների նշանակման մանդատային (մրցութային) հանձնաժողովը, որի կազմում ընդգրկվում են ռեկտորատի, ֆակուլտետի, ուսանողական խորհրդի և պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացուցիչները: Մանդատային (մրցութային) հանձնաժողովի կազմը հաստատվում է ռեկտորի հրամանով:

18.Ուսանողական նպաստների նշանակման մանդատային (մրցութային) հանձնաժողովը, մրցույթով անցած նպաստառուների ցուցակը մինչև տվյալ ուսումնական տարվա սեպտեմբերի 20-ը ներկայացնում է ռեկտորատի քննարկմանը, որի հաստատումից հետո` հրամանագրման:

19.Ուսանողական նպաստների տրամադրման (նշանակման) ամփոփ արդյունքները, մինչև տվյալ ուսումնական տարվա սեպտեմբերի 30-ը, ներկայացվում է ՀՀ կրթության և գիտության նախարարություն:

20.<Կրթության մասին> ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի 6-րդ մասի և «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն, սահմանված չափաքանակի շրջանակում, համալսարանի միջոցների հաշվին, ուսանողի սոցիալական վիճակի և կիսամյակի արդյունքներով բարձր առաջադիմության հաշվառմամբ, ուսման վարձի մասնակի (ներքին) զեղչի ձևով ուսանողական նպաստներ է տրամադրվում.

ա) սոցիալապես անապահով (ընտանիքների անապահովության համակարգում հաշվառված անապահովության 0 միավորից բարձր միավոր ունեցող ընտանիքների) ուսանողներին՝ սահմանված փաստաթղթերի առկայության դեպքում.

բ) միակողմանի ծնողագուրկ (միածնող) ուսանողներին՝

գ) երեք և ավելի անչափահաս կամ վճարովի համակարգում 2 և ավելի ուսանող երեխաներ ունեցող ընտանիքի ուսանողներին,

դ) 1-ին և 2-րդ խմբերի հաշմանդամ ծնողներ ունեցող ուսանողներին,

ե) հեռավոր, բարձր լեռնային և սահմանափակ գյուղերի հանրակրթական դպրոցների ուսուցիչների երեխա-ուսանողներին,

զ) մինչև 1 տարեկան երեխա ունեցող ուսանողներին

է) համալսարանի հայեցողությամբ՝ այլ կարգավիճակ ունեցող ուսանողներին:

21. Համալսարանի ֆինանսական միջոցների հաշվին սույն կանոնակարգի 20-րդ կետով նախատեսված վարձավճարի մասնակի զեղչի (նպաստների տեսքով) տրման հարցը առկա ուսուցման համակարգի ուսանողների համար քննարկվում է ուսումնական տարվա ընթացքում 2 անգամ՝ կիսամյակի առաջադիմության արդյունքներով, հեռակա ուսուցման համակարգի ուսանողների համար՝ 1 անգամ, ուսանողների դիմումների հիման վրա: Նախնական քննարկումները կատարվում են ֆակուլտետներում, ուսանողական խորհուրդների մասնակցությամբ, վերջնական քննարկումը կատարվում է համալսարանի ռեկտորատում, արդյունքները հաստատվում են ռեկտորի հրամանով:

22. Որպես կանոն ներբուհական ուսանողական վարձավճարի զեղչի հայցման դիմումները ընդունվում են յուրաքանչյուր տարվա հունվարի 15-ից մինչև փետրվարի 15-ը և օգոստոսի 15-ից մինչև սեպտեմբերի 20-ը: Մասնակի զեղչը տրվում է նախորդ կիսամյակի առաջադիմության արդյունքներով և այդ մասին հրամանի գործողությունը տարածվում է միայն առաջիկա (ընթացիկ) կիսամյակի վրա:

### **3. Պետական կրթաթոշակի տրամադրումը**

23. Պետական կրթաթոշակը պետական ֆինանսական խրախուսանք է և ուսանողներին տրվում է գերազանց և լավ առաջադիմության, հասարակական ակտիվության, պատշաճ վարքագիծ դրսևորելու համար:

Ուսանողների հասարակական ակտիվությունը բնութագրող ցուցանիշներն են՝

ա) մասնակցությունը ֆակուլտետի և բուհի ուսանողական, հասարակական աշխատանքներին.

բ) զեկուցումներ, ռեֆերատներ, հրատարակված աշխատանքներ (գիտական ամսագրերում).

գ) մասնակցությունը միջբուհական, քաղաքային, հանրապետական և միջազգային մրցույթներին, օլիմպիադաներին, զեկուցումներ ուսանողական

գիտական նստաշրջաններին, ուսանողական շինարարական ջոկատների աշխատանքներին.

դ)այլ հասարակական և ստեղծագործական նախաձեռնություններ՝ բուհի հայեցողությամբ:

Սույն կարգի իմաստով ուսանողների պատշաճ վարքագիծը բուհի ներքին կանոնների պահպանումն է:

24.Համալսարանում պետական կրթաթոշակի թիվը և չափը յուրաքանչյուր տարի սահմանվում է ՀՀ կառավարության կողմից:

25.Ուսանողին պետական կրթաթոշակի տրամադրումը վերանայվում է յուրաքանչյուր ուսումնական տարվա ավարտին: Նախատեսված պայմանները չապահովելու դեպքում ուսանողը զրկվում է պետական կրթաթոշակից: Պետական կրթաթոշակից զրկված ուսանողը կարող է ընդգրկվել ուսանողական նպաստառուների համակարգում սույն կանոնակարգի 3-րդ, 4-րդ և 20-րդ կետերի պահանջները բավարարելու դեպքում:

26.Ազատված պետական կրթաթոշակները մրցութային կարգով հատկացվում են այլ ուսանողների՝ սույն կանոնակարգի 23-րդ կետով նախատեսված պայմաններով:

27.Պետական կրթաթոշակ ստացող ուսանողը հարգելի պատճառներով (ակադեմիական արձակուրդ՝ առողջական վիճակի կամ գինձառայաթյան զորակոչվելու) համալսարանից ազատվելուց հետո վերականգնման տարում պահպանում է նախկինում ունեցած կրթաթոշակ ստանալու իրավունքը: Հաջորդ տարիներին մասնակցում է պետական կրթաթոշակ տալու մրցույթին համաձայն սույն կանոնակարգի պահանջների:

28. Ուժը կորցրած ճանաչել

ա)«Հայաստանի պետական ագրարային համալսարանում ցերեկային ուսուցման բակալավրային համակարգի ուսանողներին, ուսումնական տարվա առաջադիմության արդյունքներով ուսանողական նպաստ և կրթաթոշակ տալու, մրցույթի կազմակերպման (շրջափոխման) և անցկացման 17.07.2007թ հաստատված (արձանագրություն N 14) կանոնակարգը:

բ)«Հայաստանի պետական ագրարային համալսարանի վճարովի ուսուցման համակարգում ուսման վարձի չափի սահմանման, փոփոխման և վճարման կարգի մասին» կանոնակարգի 17.01.2008թ (19.12.2009թ կատարված լրացումներով) 1.9 կետի վերջին պարբերությունը:

**ՀԱԱՀ գիտքարտուղար**

**Դ. Բալասանյան**

**Կատարողներ՝**

**Յու. Մարմարյան**

**Ե. Անդրյան**